

Եւ աղբիւրներ կան այնտեղ խղճի պէս,
 Եւ կաղնիներ կան՝ հաւատի նման,
 Եւ ջրվէժներ կան որպէս բերկրութիւն,
 Եւ ծաղիկներ կան, որ մարդու ոտքը
 Կարող են օծել աստղի արցունքով ...
 Ո՛ւժ տուր գնալու,
 Ո՛ւժ տուր հասնելու եւ հաշակելու
 Անծայր բարութեան խորհուրդը խորին ...
 Ով օրհնաբերան,
 Ըստ մարգարէիդ ու տառապեալիդ
 Իմաստուն խօսքի.
 Ես էլ եմ ամպել ու չեմ անձրեւել,
 Արդ սատար եղիր,
 Օգնական ինձ լեր,
 Տո՛ւր ամպրոպը քո,

Որ ես լիաբուռն անձրեւեմ ծարաւ
 դաշտերի վրայ,
 Արեւը խառնեմ անձրեւիս լացին,
 Որ նա լուսաւոր թախծութեան նման
 Փռուի դաշտերին,
 Ծաւալուի որպէս ծաւի ծիածան ...
 Ո՛վ առաքեալդ կատարելութեան,
 Անկատար եմ դեռ,
 Տո՛ւր տառապագին քո ընթացքը ինձ,
 Նուիրաբերիր ալեքախումիդ տարերքը
 ահեղ,
 Շնորհի՛ր պայծառ մորիկը լոյսիդ ...

ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

ԿՈՒՋԵՆՔ ՈՒՆԵՆԱԼ

Յաճախ կը ցանկանմ եւնենալ պահեր,
 Ուր սիրտը լեցուի անհուն հրեռանքով...
 Ուր հոգին թեթեւ՝ ըզգայ դրախտներ
 Կանցնին իր մէջէն մի ակնթարթով...:

Յաճախ կը ցանկանմ անվերջ երազով
 Գիշերուան անթիւ աստղերն համբուրել...
 Հրեռանքի վերջին կայան կարծելով
 Քնքուշ թարմութեամբ վերստին ննջել...:

Աստղէ երազով վառող մեր հոգին
 Երբեմն կ'ըղծայ գարնան փրփրութիւն,
 Ինչ փոյթ որ աշունը՝ ծառէն կեանքի
 Կը մերկացնէ յոյսերն օրօրուն...:

Արեւներ չորս դին կ'ուզենմ ունենալ
 Սրտի ջերմութիւն ըղծալ ամեն ժամ...

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՍԻՀՈՒՆ

Հեռուէն Տորոսի

Ալեւոր լերանց

Խորքէն անթափանց

Սիւնուն կը հոսի:

Լեռներու սրտին

Գիտե՞ յոյզն անբաւ

Անոց որ կանխաւ

Կոհակներ էին:

Ձայնն իր ջուրերուն

Ու խաւարն հզօր

Լերանց իղձն է գոր

Կը տանի ծովուն:

Անշարժ, դարաւոր

Լեռնասարերու

Թռչելու, ծփալու

Կարօտն է բոլոր:

Ձոր Սիւնուն սարսռուն

Կ'երթայ տանելու

Լեռներէն հեռու,

Մշտառոյգ ծովուն:

ԻՆՏՐԱ